ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2017 թվականի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1.Համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2. 2018 թվականի համար Հնաբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

3.2018 թվականի համար Հնաբերդի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4.2018 թվականի համար Հնաբերդ համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ն

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ԿԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒԵ

Ծախսային մաս

1.Կարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Կարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 31.0 հ. դ. տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի վրա:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒԵ

Եկամտային մաս

1.Ֆոնդային բյուջեի եկամտային մասի (Համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից մուտքեր) կետը ավելացնել 197.81 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 349.37 հ. դ.:

2.Ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 197.81 հ.դ.-ով և սահմանել ընդամենը
1 666 940.9 դրամ:

Ծախսային մաս

1.Ֆոնդային բյուջեի ծախսային մասը ավելացնել 197.81 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 1 666 940.9 դրամ:

2.Ավելացող 197.81 հ.դ. գումարը հատկացնել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35- Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐՃԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

2018 թվականի հունվարի 1-ից Հնաբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 150 000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.2018 թվականի հունվարի 1-ից հաստատել Հնաբերդի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի.

2.Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2016 թվականի թիվ 31-Ն որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզի
Հնաբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 36-Ն որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2018 ԹՎԱԿԱՆԻ 01 ՀՈՒՆՎԱՐԻՑ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 8

2.Աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

№	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ /ՀՀ ԴՐԱՄ/
1	ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ /ծածկագիր՝1.2-1/	1	122 000	1 464 000
2	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՄՆԱԳԵՏ /ծածկագիր՝ 3.1-1/	1	120 000	1 440 000
3	ՕՊԵՐԱՏՈՐ	1	78 000	936 000
4	ԱԿՈՒՄԲԱՎԱՐ	1	72 800	873 600
5	ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ	1	78 000	936 000
6	ՀԱՐԿԱՀԱՎԱՔ	1	72 800	873 600
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	78 000	936 000
8	ՊԱՀԱԿ	1	72 800	873 600
	ԸՆԴԱՄԵՆԸ	8	694 400	8 332 200

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հնաբերդ համայնքում 2018 թվականի համար սահմանել
1/տեղական տուրքերի դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի,
2/տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի,
հավելված 1-ի 1,2,3 կետերի համար կիրառել 0.5 գործակից,իսկ մյուս կետերի համար՝ 0.75 գործակից:
2.Հնաբերդ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 04-Ն որոշումը համարել ուժը կորցրած:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 37-Ն որոշման

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/Հ	Տեղական տուրքերի անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
1.	Հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
	Հիմնական օբյեկտների համար՝ 1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար	15 000
	2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	30 000
	բ. 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50 000
	գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50 000
	դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	100 000
	Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ 3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	3000
	4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	5000
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
	1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն	3 000
	2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի	

	1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
	3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	5 000
4.	Համայնքի տարածքում՝ 1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝	
	Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 000
	26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13 000
	51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 000
	101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 000
	201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 000
	501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	100 000
	2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	
	Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 000
	26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13 000
	51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 000
	101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 000
	201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 000
	501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ	100 000

	հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	
5.	**Համայնքի տարածքում՝** 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քառակուսի մետրի համար	350
	2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	60 000
	3) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	5 000
	բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	10 000
	գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15 000
	դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	20 000
	ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	30 000
	զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	50 000
	4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, ոչ հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1 000
	բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	2 000
	գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4 000
	դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8 000
	ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15 000
	զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	25 000
6.	Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	50 000

7.	Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24[00]-ից հետո աշխատելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	
	1) առևտրի օբյեկտների համար	50 000
	2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	100 000
	3) բաղնիքների(սաունաների) համար	500 000
	4) շահումներով խաղերի կազմակերպման համար	500 000
	5) վիճակախաղերի կազմակերպման համար	150 000
8.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ մեկ քառակուսի մետրի համար՝	
	1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2 000
	2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	3 500
	3) այլ արտաքին գովազդի համար	1 500
	4/սոցիալական գովազդի համար	0
8.1	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի համար /1.5*25%=0.375/:	375
	Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան /1.5*10%=0.150/:	150
9.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար :	10 000

1.Աղյուսակի 1,2,3 կետերի համար ավագանու որոշմամբ կիրառվում է 0.5 գործակիցը,
2.Աղյուսակի մյուս բոլոր կետերի համար ավագանու որոշմամբ կիրառվում է 0.75 գործակիցը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 37-Ն որոշման

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/Հ	Տեղական վճարների անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	1 000
2.	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար Աբովյանի քաղաքային համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	1 000
3.	Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար	1 000
4.	Աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝	
4.1	համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան	200
4.2	Համայնքում գործող իրավաբանակն անձանց համար	
4.2.1	Առևտրի,հանրային սննդի և բնակչության սպասարկամն այլ ծառայություններ՝ամսեկան /1 քառ.մ./	35
4.2.2	Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ ամսեկան /1 քառ. մ./	15
4.2.3	Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ ամսեկան /1 քռ. մ./	4
4.2.4	Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինություններ՝ ամսեկան /1 քառ. մ./	2

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ